Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Երկրորդ ամի յաւելուած «ԱՄՈՂՋԱՊԱՀԻՍ ԹԵՐԹ»-ի

616.9
Ա-88

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԺՇԿԻ ՁՐՈՅՑՆԵՐ

ՎԱՏ ՑԱՒ

ԿԱՄ

ՍԻՖԻԼԻՍ

(ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ)

9 նկարով

№ 10 1904

ԱՌԱՆՁԻՆ — ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

FEB 2013

610
25-ԱՐ
616.9
Ա-88

30 JUL 2013

ԲԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ

ՎԱՏ ՑԱՒ

ԿԱՄ

ՍԻՖԻԼԻՍ

1003
6667

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
ԳԱԴԱՐԱՆ

(ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ)

9 նկարով

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ». || Тип. «ГЕРМЕСЪ».
1904.

Дозволено ценз. 9 Января 1901 г. Тифлисъ.

ՎԱՏ ՅԱՒ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ

Ամուսնութիւնը մի չափազանց պատասխանատու գործ է։

Ամեն ամուսնացող պարտաւոր է հարիւր անգամ կշռել այս խնդիրը, ծանր ու թեթև անել, տեսնել, թէ արդեօք ինքը ընդունակ է առողջ երեխաներ արտադրելու, թէ ոչ։ Մեծ յանցանք է գործում այն տղամարդը կամ կինը, ով հիւանդ լինելով այդ ցաւով, յանդգնում է կապել իր կեանքը մի ուրիշի հետ։ Չէ՞ որ այդպիսի ծնողի զաւակները վատառողջ կլինեն և ամբողջ կեանքում կտանջուեն ծնողներից ժառանգած ցաւով։

Մեր ժողովուրդը դեռ ևս չափազանց թեթև է նայում ամուսնութեան վրա։ «Ծղայ է պիտի պսակուի», «աղջիկ է պիտի մարդի գնա»—այս է նրանց միակ սկզբունքը։ Էլ ո՞վ է մտածողը, թէ տղան ու աղջիկը

ինչ հասակի, ինչ առողջութեան տէր են, ինչ կրթութիւն ու դաստիարակութիւն ունեն։

Իսկ եթէ այդ տղան սիֆիլիս ունի, եթէ այդ աղջիկը թոքախտաւոր է, ի՞նչ կը-լինի դրանց սերունդը *)։

—

Այս դրդոյկիս առաջին մասում մենք ասել ենք, որ սիֆիլիսոտը կարող է ըժըշ-կուել և առողջանալ, և եթէ կանոնաւոր ու ե-կարատև է եղել բժշկութիւնը, նա մի օր այն-քան առողջ կլինի, որ իրաւունք կունենայ ամուսնանալու և առողջ սերունդ ար-տադրելու։

Միայն դրա համար անհրաժեշտ է, որ սիֆիլիս ունեցողը լաւ հասկանայ բժշկութեան անհրաժեշտութիւնը, միշտ եւ անընդհատ բժշկի հսկողութեան տակ լինի ու առանց բժշկի թոյլտուութեան չամուսնանայ։

Երբէք չպէտք է մոռանալ, որ թէկուզ հիւանդի վրա այլևս ցաւի ոչ մի նշան էլ չկայ, նա այնուամենայնիւ դեռ ևս բժշկուած չէ։ Թոյնը դեռ արեան մէջն է և այսօր-վաղը կարող է մի բան դուրս գալ վրան, մի հի-

*) Տես իմ «Ամուսնութիւն» գիրքը։

ւանդութիւն վրա հասնել։ Այս է պատճառը, որ (ինչպէս ասել ենք առաջին մասում) բժշկուելուց (այսինքն. սիֆիլիսի նշանների անհետանալուց) յետոյ էլ պէտք է մի քանի տարի սպասել, որպէս զի թոյնը նուազի կամ դուցէ և բոլորովին ոչնչանայ մարմնի մէջ, և այն ժամանակ միայն նա կարող է մաքուր խղճով ամուսնանալ։

Հիմի տեսնենք, թէ ի՞նչ է պատահում, երբ սիֆիլիսոտը լաւ չբժշկուած ամուս-նանում է։ Ամենից առաջ, ի հարկէ, կինն է վարակւում. նրա արիւնը ևս թունաւորւում է, ինչպէս թունաւորուած էր մարդինը, նա ևս նոյն սարսափելի ցաւերն ու խոցերն է ունենում, ինչ որ մարդն էր ունեցել կամ ու-նի, նա ևս տանջւում է անվերջ հիւանդու-թիւններից, որոնցից ամուսինը։

Բայց հարկ չկայ, որ մարդը կնոջը վա-րակի. յաճախ պատահում է, որ թէև հայրը ըստ երևոյթի առողջացել է, այսինքն. վրայի խոցերն ու ցաւերը անցելեն, բայց նա բա-ւական ժամանակ չի սպասել և բժշկից խորհուրդ չի հարցրել, այլ շտապել է ամուս-նանալու։ Այսպիսի սիֆիլիսոտը կարող է չվարակել իր կնոջը, բայց նրա արիւնը դեռ

չի մաքրուել թոյնից, և այդ կը սպանի զա-
ւակներին։

Թէ երկու ամուսիններն էլ վարակուած
լինեն, թէ նրանցից մէկը—այդ միևնոյն
է,—հետևանքները սրանք են։

Ա. Զբերութիւն

Բ. Վիժումն (անցուցք)

Գ. Մեռած երեխաների ծնունդ կամ
շուտով մեռնող երեխաներ.

Դ. Արատաւոր և հրէշաւոր ու հիւանդ
երեխաները, կամ վատասերումն։

Մի քանի խօսք կասենք առաջին երեք
դէպքերի մասին և կանցնենք վատասերման
հարցին։

Ա. ԶԲԵՐՈՒԹԻՒՆ.

Վատ ցաւի թոյնը այնպէս է քայքայում
հիւանդի առողջութիւնը, այնպիսի փոփո-
խութիւններ է գցում նրա ամբողջ կազմու-
ածքի մէջ, որ նա անընդունակ է դառնում
զաւակ ունենալու ու սերունդը երբեմն վեր-
ջանում է։

Մեր ժողովրդի մէջ չբերութեան հա-
մար միշտ կինն է մեղաւոր համարւում։

Մարդի պառաւ մայրը ամեն օր անիծում է
իր «չոր—քեօթուկ հարսին», որը մի էրէ-
խայ էլ չի տալիս իր «խեղճ տղին»։ Բայց
յաճախ այդ «խեղճ տղէն» է մեղաւորը, ո-
րովհետև նա է, որ սիֆիլիսից լաւ չբը-
ժշկուած ամուսնացել է։

Հարսին սրբերի դռները քաշ տալուց,
գերեզմանների վրա լուանալուց, շինքին հը-
մայիլներ քաշ անելուց, գրբացների շէմքերը
տրորելուց ոչինչ դուրս չի գայ, մինչև որ
հիւանդ մարդը չբժշկուի կանոնաւոր կեր-
պով։

Այս մասին երկար չենք խօսի։ Թող լաւ
մտածեն սրա մասին իրանց բժշկուած կար-
ծող սիֆիլիսոտները։

Բ. ՎԻԺՈՒՄՆ։

Նոյն պատճառից կինը վիժումներ է
անում։ Ո՞վ չի լսել, որ կան կանայք, որոնք
շարունակ ամեն-տարի «անցուցքներ» են
անում։ Ամուսինները յուսահատուած են,
փափաքում են երեխայ ունենալ, իսկ կինը
շարունակ վիժում է ու տունը մնում է ան-

զաւակ։ Քիչ չի պատահում, որ վիժեն 5—7—11 անգամ։

Էլի ընկնում են սրբերի դռները, էլի զանազան կիսակախարդական ծէսեր են կատարում, բայց երեխան չի մնում ու չի մնում։

Եւ յանկարծ, մի քանի վիժումներից յետոյ, կենդանի զաւակ է ծնւում։ Ինչ՞ից էր, որ այսքան ժամանակ երեխայ չը կար կամ չէր մնում ու յանկարծ կինը ծնեց։ Ի հարկէ, ժողովուրդը, ինչպէս միշտ, իր բացատրութիւնն է տալիս։ «Հ՛ը, տեսա՞ր, Տռճկենց պառաւը ինչ ձեռք ունի. եկաւ «բթիկ» արաւ ու հրէն Զարուխենց Հեղնարը երեխայ բերեց»։

Միշտ միևնոյն տխմար բացատրութիւնները... Իսկ սենք գիտենք դրա պատճառը, որը շատ պարզ է։ Սիֆիլիսի թոյնը մի քանի տարուայ ընթացքում նուազել է և այլ ևս չի սպանում արգանդի պտուղը ուրիշ ոչինչ։

Գ. ՄԵՌԱԾ ԿԱՄ ՇՈՒՏՈՎ ՄԵՌՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՒՆԴ

Յաճախ, մի քանի վիժումներից յետոյ, սիֆիլիսոտ կինը (կամ սիֆիլիս ունեցող մարդի կինը) ծնում է երեխայ, բայց սեռած, նոյն իսկ նեխած, խմորուած։ Այդպիսի ծնունդներ կարող են մի քանիսը իրար յետևից լինել, կամ մեռած երեխայից յետոյ կլինի դարձեալ մի շարք վիժումներ, յետոյ կարող է ծնել նաև կենդանի զաւակ, բայց այնքան նուազ ու թոյլ և այնպիսի հիւանդութիւններով, որ երկար չի ապրի ու հազիւ լոյս տեսած—կը մահանայ։ Երեխայի հիւանդական նշանները նոյնն են լինում, ինչոր ատացական սիֆիլիսինը։ Մաշկը և թաղանթները ծածկուած են լինում բծերով ու խոցերով, սիֆիլիսական ուռուցքներ են գոյանում մարմնի զանազան մասերում ու ներսի գործարանների մէջ և այլն։

Մեծ մասամբ այս ցաւերը մօր արգանդի մէջն են սկսւում ու սպանում են պտուղը, յաճախ էլ երեխան կենդանի է ծնւում, բայց արդէն հիւանդ և իսկոյն մեռնում է։ Իսկ

երբեմն էլ նա ծնվում է մաքուր մաշկով և ըստ երևույթի առողջ, բայց մի քանի օրից, շա-

Նկ. 20.

Ահա մի նորածին երեխայ, որի ձեռների ափերը և ոտների տակը ծածկված են սիֆիլիսական մեծ խոցերով (պեմֆիգուս)։

բաթից յետոյ երևան են գալիս ժառանգական սիֆիլիսի ախտանիշները։

Պատահում են նոյնպէս և շատ դէպքեր, երբ երեխան բոլորովին առողջ է ծնած, ապրում է մէկ տարի—երկու տարի և աւելի, ու յանկարծ սկսում է սիֆիլիսի նշան-

Նկ. 21

Այս նկարը ներկայացնում է մի սիֆիլիսոտ երեխայ, որի ճակատին սիֆիլիսական ոսկրուռուցներ կան։

ներ ունենալ։ Անկարելի է ասել, թէ որ հասակումն է վերջանում վտանգը։ Երբեմն երեխաները ապրում են 10—15, նոյն իսկ

20 և աւելի տարի, առողջ են ու լաւ կազմուածք ունեն և, արդէն հասած տղամարդ դառած, սկսում են աւերուել և սիֆիլիսական հիւանդութիւններ ստանալ.—սիֆիլիսի նշանները շատ ուշ են երեւում։

Այսպէս դաժան ու վրէժխնդիր է վատ ցաւը...

Երբեմն էլ երեխայի վրա ցաւի ոչ մի նշան չկայ, և ծնողները յոյս ունեն, որ նա կապրի ու կմխիթարի իրանց։ Բայց մանկիկը վատ է սնունդ առնում, լալկան է, անհանգիստ, քանի գնում—նուազում է, թուլամորթ դառնում և կամաց-կամաց մոմի պէս հալչում է ու հանգում։

Սա այն դէպքերից է, երբ սիֆիլիսի թոյնը քանդում է կեանքի հիմքը առանց աղմուկի, կամաց կամաց նսեմացնելով մանկան կենսական ոյժերը։

Ո՛չ մի ժառանգական հիւանդութիւն այնչափ երեխաներ չի փչացնում, որչափ վատ ցաւը.—այս ապացուցուած է բազմաթիւ գիտնականների արած դիտումներով։

Մի գիտնական հետազօտութիւններ է արել այս մասին և գտել է, որ 491 երեխայից 382-ը չեն ապրել,—ուրեմն 100-ից

77-ը մահացել են!... Սրանք կամ մեռածին ծնուել կամ մեռել են ծնուելուց քիչ ժամանակ անց։

Այսպիսով փչանում են հազարաւոր մանուկներ, որոնք, աւետարանի խօսքով, պիտի աճէին ու բազմանային։

Նայեցէք մի քանի թուեր։

Մի կին ծնել է	4	երեխայ	—	մեռել են	3
» » »	5	»	—	»	4
» » »	6	»	—	»	5
» » »	7	»	—	»	6
» » »	9	»	—	»	6
» » »	12	»	—	»	7
» » »	13	»	—	»	7
» » »	9	»	—	»	8
» » »	12	»	—	»	9
» » »	11	»	—	»	10
» » »	12	»	—	»	11
Մէկ կին յղ. է	6	անդ.	—3	վիժ. և 3 մեռ.	եր.
Մի ուրիշ »	7	»	—1	» 5	» »
Մի եր. »	8	»	—2	» 3	» »
Մի չոր. »	15	»	—3	» 11	» »

Տեսէք ինչ սոսկալի թուեր. 15-ից 14 երեխայ փչանում են!

Չէ՞ որ սա զարհուրելի է...

Դ. ԱՐԱՏԱՒՈՐ ԾՆՈՒՆԴ ԿԱՄ ՎԱՏԱՃՈՒՄՆ

Այստեղ մենք պիտի խօսենք այն բազմաթիւ արատաւորութիւնների ու հրէշաւորութիւնների մասին, որ յաճախ ունենում են սիֆիլոսոսների երեխաները։

Լաւ հասկանանք, թէ դա ինչ է։

Մինչև այժմ մենք խօսում էինք սիֆիլիսոսի ժառանգների այն հիւանդութիւնների մասին, որոնք սիֆիլիսական են,— ուրիշ խօսքերով, որոնք նոյն են, ինչ որ ստացական սիֆիլիսինը։ Երեխաները կարծես ուղղակի վարակուած են ծնողներից և նոյն նշաններն ունեն իրանց մարմնի վրա, ինչ որ ունեն առհասարակ վատ ցաւով վարակուածները։

Բայց շատ դէպքերում երեխան ոչ մի նշան չունի վրան, ոչ մի բիծ կաշու վրա, ոչ մի խոց թաղանթների վրա,—մի խօսքով. ոչ մի հիւանդութիւն, որը առհասարակ նկատւում է սիֆիլիսոսների վրա։ Սակայն այդ երեխան ուրիշների նման չէ։ Լաւ զննեցէք նրա մարմինը և կը գտնէք նրա մէջ մի որևէ անկանոնութիւն. կամ գլուխն է

չափազանց մեծ, կամ ոսկրերն են ծռուռմուռ, կամ մատները կարճ ու երկար, կամ աչքերը մի ուրիշ տեսակ, ցաւոտ, կամ ականջները ու առատները օտարօտի...։

Ինչից է առաջ գալիս այս բոլորը։ Ի՞նչն է պատճառը, որ պակասաւոր երեխաները շատ աւելի յաճախ են պատահում սիֆիլիսոսների ընտանիքում, քան առողջների։

Սա վատասերումն է։

Միայն սիֆիլիսը չէ, որ այսպէս նսեմացնում և այլանդակում է սերունդները։ Մենք մի ուրիշ տեղ խօսել ենք սերնդի վատասերման մասին ծնողների զանազան հիւանդութիւններից *), այն է. ալկոհոլիզմ (գինեմոլութիւն), թոքախտ, ներվայնութիւն, ազգակցական ամուսնութիւն։ Այս վերջին հիւանդների սերունդներ էլ ծնւում են վատասերուած, այսինքն. թուլակազմ, արատաւոր, կեանքին անընդունակ և ենթարկուած հազար ու մի տեսակ հիւանդութիւնների ու տկարութիւնների։

Ի՞նչն է այս վատասերման սկզբնական ու հիմնական պատճառը։ Ի՞նչի սիֆիլիսոսի

---

*) Տես մեր «Ամուսնութիւն»։

զաւակը, որը առողջ էր ծնուած, կամաց-
կամաց հալւում-մաշւում է ու մի թոյլ ան-
ընդունակ էակ է, դառնում։ Ինչից է որ նա
այսքան արատների տէր է դառնում, այսքան
տանջանքներ է կրում իր կարճ կեանքում։

Բացատրենք այդ և տնցնենք արատներին
ու հրեշաւորութիւններին։

Սիֆիլիսի թոյնը այնչափ զօրեղ է, որ
մտնում է մեր մարմնի բոլոր անկիւնները և
հիւանդական դրութեան մէջ դցում մար-
դի կազմուածքի ամեն մի թելը։ Վատասեր-
ուած մարդի միտն էլ այն չէ, ներվերն էլ
այն չեն, սեռական գործարաններն էլ այն
չեն, ինչ որ առողջինը։ Սերմը, որը ծնունդ
է տալիս զաւակի սաղմին մօր արգանդի
մէջ, կորցնում է իր զօրութիւնը և ոյժը։
Ի հարկէ, այդպիսի մարդի սիրունդն էլ չի
կարող այն լինել, ինչոր առողջինը։

Մենք դեռ չդիտենք, թէ ինչ են այն
փոփոխութիւնները, որոնք այդչափ նուա-
զեցնում են մարդի ուժերը։ Բայց հարիւրա-
ւոր բժիշկների արած հետազօտութիւնները,
դիտումները ցոյց են տալիս, որ հիւանդու-
թեան թոյնի ազդեցութեան տակ մի ինչ
որ քան է փոխւում սիֆիլիսոտի սեռական

ուժի մէջ։ Եւ այդ «ինչ որ բանի» փոփոխու-
թեան հետևանքը լինում է վատասերուած
սերունդ։

Այսպէս ուրեմն, վատ ցաւը միւս թու-
նաւորութիւնների հետ միասին (գինեմոլու-
թիւն, թոքախտ և այլն) վատաշրջում է հի-
ւանդների մարմնի հիւթերը։

Խոսենք այժմ այդ ժառանգական վա-
տասերման մասին։

Սակայն հէնց այժմ խնդրում ենք ըն-
թերցողին չմոռանալ հետևեալը.

1. Այն բոլոր արատները, որ պիտի
նկարագրենք, պատահում են նոյնպէս և
թոքախտաւորների ու արբեցողների սերունդ-
ների վրա և 2. ոչ բոլոր սիֆիլիսոտների
զաւակները այդ արատներն են ունենում և
սիֆիլիսոտի ոչ բոլոր զաւակները ծնունդ
ցից շատերն էլ ծնում են ու մնում
առողջակազմ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Публичная Библиотека
7/II 1922
имени Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ժառանգական սիֆիլիսոտներին կա-
բելի է երեք կարգի բաժանել։

1. Այսպիսիներ, որոնց մարմնի մի
որևէ մասն է միայն հիւանդոտ կամ ա-

բատաւոր (օր. գլուխը, աստամները, անդամ-
ները և այլն),—մասնաւոր վատաճումն։

2. Այնպիսիներ, որոնք ամբողջ մար-
մնով են վատասերուած ու պակասաւոր,—
ընդհանուր վատաճուան կամ վատասերումն։

3. Հրէշները։

---

1. ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՏԱՃՈՒՄՆ

1. ԳԱՆԳԻ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամբողջ գանգը (գլուխը) կամ չափա-
զանց փոքր է լինում, կամ չափազանց մեծ։

Երբեմն երեխաներ են ծնւում, որոնց
գլուխը մի փոքրիկ նարնջի կամ խնձորի
չափ է։ Սրանք փոքր-գլխանիներն են։

Կան և մեծ-գլխանիներ։ Շատերը տե-
սած կը լինեն մեծ գլխանի երեխաներ,
որոնք հազիւ կարողանում են իրանց ահա-
գին գլուխը ուսերի վրա պահել։ Երբեմն ըն-
տանիքի բոլոր երեխանները այդ ածւու-
թիւնն ունեն։

Գլուխը կարող է նաև սովորական սե-
ծութիւնն ունենալ, բայց լաւ զննեցէք և կը
գտնէք գլխի վրա զանազան անկանոնու-
թիւններ,—նա կամ երկար-սօլիկ է (նկ. 23.)

ու սրածայր, կամ տափակ կամ կողքերը

Նկ. 22.



դուրս պրծած կամ ներս գնացած կամ որ և է տեղը փոս ընկած և այլն։

Յաճախ էլ գլուխը անսովոր մեծութիւն ու փոքրութիւն ունի, և տձև է։

Նկ. 23.

Տեսէք այս երեխայի տհաղին գլուխը և ճակատի դարերը (Նկ. 22)։

Նայեցէք այս միւսին էլ (նկ. 23), որի գլուխը կասես գնդանի մէջ դրած—սեղմուած է կողքանց ու տափակացրած։ Սրա քունքի ոսկրերը ներս են սեղմուած ու փոս ընկած, որից ճակատի ոսկրը տափկուել է ու դուրս է պրծել աքլորի կատարի նման։

Սրանք են գանգի վրա նկատուած վատաճումներն ու այլանդակութիւնները։

Դէմքի վրա նոյնպէս շատ անկանոնութիւններ են նկատւում։

Նրա երկու մասերը հաւասար չեն և երկու կողմերը միանման չեն,—մի կողմը աւելի երկար է ու աւելի լայն, քան միւսը։ Այսպիսի մարդիկ իսկապէս երկու-երնեանի են։

2. ԳԼԽԻ ԶՐԳՈՂՈՒԹԻՒՆ

Ժառանգական սիֆիլիսոտ երեխաների մէջ պատահում է երբեմն ուղեղի այս սարսափելի հիւանդութիւնը։ Ահագին գլուխը լցուած ջրով, որը սեղմում-ճնշում է ուղեղը ու մահ առաջացնում։

---

3. ԱՏԱՄՆԵՐԻ ՎԱՏԱՃՈՒՄՆ

Ատամների վատաճումը շատ ձևեր է ընդունում։ Նախ.—ատամները շատ ուշ են դուրս գալիս, 10—15 ամսում միայն, երբեմն էլ աւելի ևս ուշ։ Յետոյ սրանք լինում են կամ չափազանց մանր (ատամների մանկայնութիւն) կամ չափազանց մեծ (ատամների հրէշաւորութիւն) կամ խառն.—մանր ու մեծ։

Երկրորդ այլանդակութիւնն այն է, որ ատամները չափազանց անկանոն են դասաւորած լինում ընդերի մէջ։ Յետ ու առաջ են լինում, շատերը բոլորովին դուրս չեն գալիս, կամ վերևի ու ներքևի շարանները իրար չեն համապատասխանում, այնպէս որ բերանը ծածկելիս նրանք իրար չեն կպչում, այլ վերևինը առաջ է ընկնում, իսկ ներքևինը յետ։ Այդ դէպքում ծամելն ի հարկէ դժուարանում է։

Երրորդ.—ատամների ձևը այլանդակ է լինում, օրինակ. ատամի կարող մասը վզից աւելի նեղէ և այլն. վերջապէս. նրանք հիւանդոտ են լինում, ծուռ-մուռ, եզրերը ջարջրդուած ու կերուած, երբեմն սղոցի

նման քերթ-քերթ, վրաների փայլուն էմալը փչացած, և ուրիշ տեսակ այսպիսի ֆլասում-ներով (նկ. 24)։

նկ. 24



Երբեմն այս ֆլասումները այնքան բնո-բոշ են, որ հմուտ բժիշկը, սիայն տատամ-

ները զննելով, կարողանում է իմանալ, որ այդ երեխայի ծնողները սիֆիլիս են ունե-ցած։

Աւելացնենք և այն, որ փոքր ի շատէ լաւ տատամներն էլ շատ շուտով փչանում են։

4. ՇՐԹՆԱՀԵՐՁՈՒԹԻՒՆ

Ժառանգական սիֆիլիսը պատճառ է դառնում նոյնպէս և շրթնահերձութեան, այ-սինքն. շրթունքների ճեղքուած լինելուն։

Ամենքը տեսած կը լինեն երեխաներ, որոնց վերին շրթունքը ճեղքուած է մինչև քթի ծակը։ Դա միայն սիֆիլիսից չի լինում, բայց այդ ցաւից աւելի շատ է պատահում, քան միւս ժառանգական հիւանդութիւննե-րից։

5. ՔԻԹՆ ՈՒ ԲԵՐԱՆԸ

Քթի արմատը տափակ—ոչնչացած է, կար-ծես մատով հուպ է տուած։ Երեխան յա-ճախ ամբողջ կեանքը տանջւում է անվերջ հարբուխով, որից դարշելի հոտ է գալիս։ Քթի միջի պատը փտած է, կերուած, քիմքը կերուած, ոսկրը փտած, այնպէս որ քիմք

չկայ ու երեխան մեծ դժուարութիւնով կարող է բան ուտել ու խմել, որովհետև կերած—խմածը քթից դուրս է թափւում։

6. Ա Զ Բ Ե Ր Ը

Աչքերը ևս ժառանգական սիֆիլիսից շատ ֆնասուած են լինում։ Ամենից յաճախ շլութիւն է պատահում։ Մի բժշկի ասելով 52 ժառանգական սիֆիլիսոտներից 18-ը շիլ են։ Լինում են և կոյր ծնած երեխաներ։

7. ԱԿԱՆՋԻ ՎԱՏԱՃՈՒՄՆ

Դրսի ականջը կարող է ուղղակի չը լինել, ծակը փակ լինել կամ շատ տեսակ անկոնութիւններ ունենալ. յետ ու առաջ է կպած լինում, կամ չափազանց վերև ու չափազանց ներքև։ Յաճախ ականջի մէկից կամ երկուսից էլ թարախ է հոսում (ժողովուրդն ասում է. «ծնում է»), կամ երեխաները ուղղակի խուլ են ծնում։

8. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՏԱՃՈՒՄՆ

Երբեմն մի ոտը միւս ոտից կարճ ու երկար է լինում, մի թևը—միւսից։ Նոյն

տձևութիւնը նկատւում է և ուրիշ մասերի վրա, օրինակ կողերի։ Պատահել են դէպքեր, երբ մի որևէ ոսկր բացակայ է եղել։

Նայեցէք այս երեխայի նկարին (նկ. 25) Սա սիֆիլիսոտ ծնողի (հօր)ծընունդ է։ Նրա մայրը ուրիշ անգամ յղացել է։

Առաջին յղութիւն.—աղջիկ, որը առողջ էր ծնուել։

2-դ. յղ.—վիժումն։

3-ր. յղ.—մեռած երեխայ է ծնւում։

4-ր. յղ.—ծնն-

Նկ. 25

ուել է այս աղան, որի պատկերը դրե-
ցինք։

5-դ. յդ.—մի երեխայ, որը մեռնում է 6 ամսական-կարկամումներից (մարմնի ներ-
վային) ձգձգումն։

6-դ. յդ.—մեռած երեխայ։

7-դ. յդ.—երեխան ապրում է, բայց նիհար է, փոքր ու արատաւոր մարմին ունի (վատասերուած)։

8-դ. յդ.—նոյնպէս չափազանց թուլա-մորթ երեխայ։

Նկարի վրայի երեխան ունեցել է մար-մնի վրա զանազան ցաւեր ու ոսերին խոցեր։ Երբ սկսեց դպրոց յաճախել, ծնողները նկա-տեցին, որ ոտերը չափազանց երկար են և ծռուած։ Յետոյ աչ ոտը աւելի երկարեց, քան ձախը ու երեխան սկսեց կաղել։ Ընդ-հանուր առողջութիւնը քանի գնաց—վատա-ցաւ և խեղճը այնպիսի դրութեան մէջ ըն-կաւ, որ նրան տարան հիւանդանոց։ Ոտե-րից մէկը միւսից մի վերշոկ երկար է, սրունքները ծածկուած են խոցերով ու ծռմռուած։

---

9. Մ Է Զ Ք Ը

Ժառանգական սիֆիլիսը ծռմռում է ողնաշարը։ Սա ծռւում է կամ յետ ու առաջ կամ կողքանց։ Ողնաշարը ծռուելիս, իհարկէ կողերն էլ, ուսերն էլ հետն են ծռւում ու խեղճ երեխան կուզ ու այլանդակ է դառ-նում։

Բացի այս ծռուելիւնները (կորութիւն-ները), կայ և մի սարսափելի հիւանդութիւն, որը մահաբեր է.—սա ճնդրուած մէջքն է։ Ողնաշարի մի մասը ճեղքուած է լինում և այդ ճեղքուածքից ողնուղը դուրս է ընկնում։

10. ՀՍԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԶՈՒԿՈՒԹԻՒՆ

Երևակայեցէք, որ երեխայի մի ոսկրը միայն չի մեծացած (ինչպէս այն աղայի ոտերի ոսկրերը), այլ մարմնի բոլոր ոսկ-րերը, այսինքն. ամբողջ կմախքը։ Ի՞նչ կը լինի այն ժամանակ։

Այն ժամանակ այդ երեխան իհարկէ աւելի մեծ կը լինի, աւելի յաղթանդամ։

Սրանց անուանում են հսկաներ։

Մի քանի յայտնի հսկաներ գտնուած են և դուրս է եկել, որ նրանց ծնողները սի-

ֆիլիս են ունեցած և հէնց իրանք—այդ հիվանդները-ժառանգական սիֆիլիսի շատ ուրիշ նշաններ էլ ունեն իրանց վրա։

Նրանց հասակը հասնում է 4 արշինի, վիթխարի կուրծք ու անդամներ ունեն նրանք և կարծես աժդահաներ են։ Տեսնողը կը կարծի, թէ դրանց նման առողջ մարդ չկայ աշխարհումս. կարծես հարիւր տարի պիտի ապրեն... Բայց բժշկի աչքին դրանք ժառանգական հիւանդներ են, որովհետև նրանց վրա ժառանգական սիֆիլիսի բազմաթիւ նշաններ են գտնւում։

Հսկաների կողքին պէտք է դնենք *թզուկներին*։ Երեխաները չափազանց փոքր են ծնւում ու շատ քիչ մեծանում։ Նրանց հասակը (երբ արդէն հասունանում են) հազիւ $1^1/_2$ արշին (նոյն իսկ աւելի պակաս) է լինում։ Հասակին համեմատ, անդամներն էլ, ձայն էլ, սեռական անդամներն էլ նուազ, *երեխայական են* մնում ամբողջ կեանքը, միրուք ու բեխեր համարեա չեն ունենում, նուազ ու բթամիտ են լինում և երկար չեն ապրում։

Այսպիսի խաղեր էլ է անում ժառանգական սիֆիլիսը...

11. ՁԵՌՆԵՐԻ ՈՒ ՈՏԵՐԻ ՍՅԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Զարմանալի ազդեցութիւն ունի վատ

Նկ. 26.

ցաւի թոյնը ժառանգների ոտերի ու ձեռների կազմութեան վրա։

Նկատում են զանազան տեսակ անկանոնութիւններ։ Կամ երկու մասը ձուլուած (կպած են) լինում իրար և ձեռի վրա երկու-երեք մատ է լինում միայն, կամ մի որև է մասը, օրինակ. բութը բացակայ է լինում, կամ թէ ընդհակառակը մէկի տեղ երկուս է դուրս եկել և ձեռի վրա 6—7 մատ կայ, կամ թէ չէ մատերից մէկը չափազանց երկար է, սիւնները չափազանց կարճ և այլն։

Նայեցէք այս նկարին (տ. նկ. 26)։

Վերև—ձեռն է, որի վրա երկու-երեք մատ կայ միայն, ներքև,—ոտն է, նոյնպէս երկու մատով։ Եղածներն էլ ձև ու ծռմռուած, կիսատ։ Պատահում է, որ իսկի ձեռ չը կայ, կարծես արմունկից կտրել են...

12. Գ Ա Ի Ա Կ Ը

Գաւակը նեղ է լինում, որից և վիժումներ ու դժուար ծնունդ է առաջ գալիս։ Ոտերի ծռութիւնները ամենքին յայտնի են. —թաթերը կամ դարձած են լինում ներս, կամ շուռ տուած դէպի դուրս, այնպէս որ քայլելիս սայլուած են ոտերը շատ բարձրացնել, որ իրար վրայով անցնեն։ Պատահում է նոյնպէս, որ երեխան ծնւում է ոտերը դուրս ընկած...

13. ՈՒՂԵՂԻ ՎԱՏԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Ուղեղը երբեմն շատ փոքր է մնում, կամ նրա վրա զանազան անկանոնութիւններ են լինում։ Ուղեղի մէջ գտնուած պակասութիւններից երեխան խուլ-համր է ծնւում, կամ կոյր։

---

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՏԱՃՈՒՄՆ

Մինչև այժմ խօսում էինք սիֆիլիսով ժառանգների մասնաւոր արատների ու վատաճումների մասին։

Հիսի տեսնենք, թէ ինչ է լինում նրանց ընդհանուր առողջութիւնը և նրանց արտաքինը (տեսքը)։

ԴԷՄՔԸ ՈՒ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ

Երեխաները առհասարակ ծնւում են սաստիկ նուազ կազմուածքով, այնքան թուլակազմ, որ անկարող են լինում ապրելու։

Ահա թէ ինչ է ասում մի գիտնական.

,,Այս երեխաները զարմանալի արագ ու հեշտութիւնով են մեռնում։ Մի քանիսը հաւ լոյս տեսած, մահանում են.—մի քանի ր ոպէի կամ սի քանի ժամուայ մէջ։ Միւսները դիմանում են 2—3 օր, սի քանիսներն էլ—մի քիչ աւելի երկար։ Բայց զարմանալին այն է, որ բոլորն էլ մահանում են առանց որոշ պատճառի, հէնց այնպէս, առանց հիւանդանալու։ Նրանց մասին ասում են, որ մեռնում են ոչնչից։ Իսկապէս նրանք մահանում են ժառանգած թունաւորութիւնից, որը խլել է նրանցից ապրելու կարողութիւնը։

Յաճախ երեխաները ծնւում են փոքր ի շատէ բաւարար ու առողջ տեսքով. այն ժամանակ երեք տեսակ է լինում։

Կամ երեխան քանի գնում—նուազում է, նիհարում է, կարծես քամում է ու մեռնում։

Կամ մի քանի ժամանակ կանոնաւոր կերպով է զարգանում, մինչև անգամ քաշը աւելանում է և յանկարծ սկսում է յետ գնալ, արագ ուժակորուսա է լինում ու մեռնում, էլի առանց որ և է պատճառի։

Բայց յաճախ էլ մանուկը լաւ է զարգանում, առողջ է երևում, լցւում է հայլն։ Բայց դա տեւում է մի քանի շաբաթ միայն և աճումն կանգնում է, երեխան էլ առաջ չի գնում, քաշը չի աւելանում, և մարմնի վրա դուրս են տալիս զանազան բծեր, խոցեր են գոյանում բերանի մէջ և ներսի գործարանները հիւանդանում են։ Եւ արագութեամբ

խեղճ փոքրիկը նուազում է, նիհարում, երեսի ու մարմնի մաշկի (կաշուի) վրա կնճիռներ են գոյանում և վերջ ի վերջոյ հալւում է—մաշւում ու հանգչում...

Նայեցէք այս նկարին (նկ. 27).

նկ. 27.



Սա մի վաղաժամ ծերունի է. դէմքը կնճիռներով ծածկւած, նրա մարմնի կաշին

հազար փոթեր ունի, կասես կիսատ լցուած մի պարկ է։ Դէմքը կապիկի դէմքի նմանութիւն է տալիս, իր ահագին բերանով ու մեծ աչքերով փոքրիկ կնճռուած երեսի վրա։ Սա սիֆիլիսի զաւակ է։

2. ՄԱՆԿԱՅՆՈՒԹԻՒՆ

Ժառանգական սիֆիլիսոտների մէջ յաճախ պատահում են այնպիսիներ, որոնք չափազանց ուշ են սկսում քայլել, ուշ խօսել, նրանց ատամները ուշ են դուրս գալիս ու փոքր մնում, սեռական գործարանները անզարգացած են մնում, բեխերն ու մերուքը ուշ են բուսնում ու ցանցառ են մնում,—երբեմն էլ տղան քոսա է։ Աղջիկները փոքր են մնում, նրանց ստինքները մանր, դաշտանը հազիւ 18—20 տարեկան հասակումն է բացւում, որովհետև նրանց սեռական գործարանները ուշ են զարգանում։

Սրանք *մշտական երեխաներ* են, իրանց տարիքից պակաս են երևում միշտ. հասակները կարճ, մարմինը սեղմուած, թևերն ու ոտները բարակ, տարիքով պատանիները երեխաների տեսք ունեն, երիտասարդները—պատանիների։

Այս գրութիւնը յայտնի է ընդհանուր անունով. մանկայնութիւն։ Երբեմն երեխաները այնքան փոքր են լինում, որ դուրս են գալիս թզուկներ։ Սրանք ծնուելիս հազիւ մի փոքրիկ նարնջի չափ գլուխ ունեն, իսկ ոտերն ու թեները—հազիւ ճկուտի հաստութիւն ու երկարութիւն։

3. ՐԱԽԻՏ ԿԱՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՑԱՒ

Սիֆիլիսոտ ծնողների զաւակները ծընւում են բախիտով (անգլիական հիւանդութեամբ)։ Այս հիւանդութիւնը ընդհանուր կմախքի վատակազմութիւնն է։ Ոսկրերը կարծես փուխր, ճկուն են և հեշտութեամբ ծռմռւում են, երեխաները ահագին գլուխ ունենալուց զատ, կուզ են լինում, ողնաշարն ու կողերը ծռմռուած, դընրանից էլ ուսերը բարձրացած, կողքերից մէկը դուրս պրծած, միւսը ներս գնացած։ Այդ վատ կազմուածքը ոչ միայն հրէշ է դարձնում երեխային, այլ և տրամադրում է նրան դէպի զանազան հիւանդութիւններ, որոնցից ամենագլխաւորն է թոքախտը։

Այս գրքի փոքր ծաւալը թոյլ չի տալիս մեզ մի առ մի նկարագրել այն բոլոր այլանդակութիւններն ու հրէշաւորութիւնները, որոնք նկատուած են սիֆիլիս ունեցողների զաւակների վրա։

Լաւ իմացէք, որ ոչ մի մանրամասն, ոչ մի գործարան ազատ չի մնում թոյնի ազդեցութիւնից։ Սիրտը, երակները, թոքերը, փայծաղը, բերանը, քիմքը, քիթը, աչքերն ու ականջները, ստամոքսն ու աղիքները, սեռական գործարանները—բոլորը կարող են վատաճուած, այլանդակուած, հիւանդոտ լինել։

Ցանկարծ մի երեխայ է ծնում, որի արտանունքը ճեղքուած չեն ու աչքերը փակ են, ականջներում ծակ չկայ, դրսի ականջը բացակայ է կամ քիմք չկայ։ Մի ուրիշը, որի եաքը (սրբաեը) գոցէ կաշիով, մի երրորդը, որի ազիքները չափազանց կարճ են ու նեղ, սիրտը սրտի նման չէ, փայծաղը փայծաղի, կամ թէ չէ փորը բաց է (կարծես դանակով պատռել նե) ու աղիքները դուրս թափուած, կուրծքը ճեղքուած է ու թոքերը երևում են, կամ երեխան սեռական անդամ չունի, կամ ձուարանները չունի, աղջիկը զաւակատուն չունի և այլն

այս նման հրէշաւոր պակասութիւններ։

Յաճախ ի հարկէ յիշած հրէշաւորութիւններից շատերը միանում են մի երեխայի մէջ ու դուրս է գալիս մի իսկական հրէշ, մի զարշելի ձև էակ, որի ծնունդը մեր պառաւները քաջքերի գործ են համարում։ Մեր ժողովրդի մէջ դեռ չի վերացել այն տխմար հաւատալիքը, թէ կինը կարող է շուն, կատու, դև ծնել։ Գուցէ այս հրէշաւոր ծնունդներն են, որ առիթ են տուել այդ վայրենի համոզմունքի արմատանալուն մեր մէջ...

4. ՄՏԱՒՈՐ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այժմ մի քանի խօսք էլ ասենք ժառանգական սիֆիլիսի գործած աւերումների մասին երեխայի մտաւոր աշխարհի վրա։

Ինչպէս մարմինն է վատակազմուած, նոյնպէս էլ երեխայի խելքը, բանականութիւնը և առհասարակ նրա հոգեկան ու մտաւոր աշխարը կարող է թոյլ կամ արատաւոր լինել։

Ընթերցողը կարասփէր, եթէ հնար լիներ պատմել այն սոսկալի դէպքերը, որ բժիշկները նկատել են մինչև այժմ։

Սիֆիլիսոտի զաւակը, եթէ ապրում էլ է, եթէ ըստ երևոյթի կանոնաւորէլ է ծնուած, այնուամենայնիւ նրա մտաւոր աշխարը յաճախ խաւար է մնում։

Երեխաները միշտ յետ են մնում իրանց առողջ ընկերներից թէ ուսման մէջ թէ և կեանքի ասպարէզում։ Նրանք ուշ են սկսում խօսել, ուշ հասկանալ, ուշ կարդալ—գրել։ Նրանց միտքը դոց է, չունեն մանկական հասակին յատուկ աշխուժութիւնը, դիւրըմբռնողութիւնը ու սրամտութիւնը։

Սրանց յետամնացները են.

Բայց այս բոլորը չէ։

Նրանք մէջ շատ յաճախ պատահում են դանդաղամիտ ու ամեն քանի անընդունակ երեխաներ, ապուշներ, ներվայիններ, ընկնաւորներ ու խելացնորներ, որոնք ոչ մի գործի ընդունակ չեն ու ծանր բեռ են դառնում իրանց ծնողների ու հասարակութեան վզին։

Սարսափելին այն է, որ մի և նոյն ընտանիքի մէջ մի քանիներն են այդպէս ապուշ, տխմար կամ մտքով հիւանդոտ լինում։ Օրինակ. մէկը լինում է ընկնաւոր, միւսը

ապուշ, երբորդը անբարոյական, չորրորդը հիստերիկ (ներվային) և այլն։

Ներվային հիւանդութիւնները շատ տեսակ են լինում - սկսած ամենաթեթև բարկացողութիւնից ու լալկանութիւնից—մինչև զարհուրելի ընկնաւորութիւնն ու կարկամումները։ Այս վերջին հիւանդութիւնը (կարկամումն) շատ յաճախ է պատահում։ Յանկարծ մարմնի բոլոր մկանները (մսերը) լարւում են, ձգձգւում ու մէջքը, վիզը ոտերն ու թեւերը սկսում են ծռմռուել, ոսկրները ջարջրդուել, երեխան զարկւում է գետին, գալարւում է, վեր-վեր է թռչում անդամները կծկւում ու երկարում, ընկնում է մէջքի վրա, շուռ ու մուռ է գալիս կողքերի վրա, վզի երակները արիւն լցուած ու պարանների պէս լարուած, աչքերը դուրս թռած, լեզուն դուրս ընկած, շնչառութիւնը կապուած... Այս զարհուրելի բռնկումները կարող են կրկնուել օրուայ մէջ մի քանի անգամ, նոյն իսկ մի ժամուայ մէջ մի քանի անգամ և սպանել հիւանդին։

Լաւ պատկերացնելու համար, թէ ինչ է լինում սիֆիլիսոսի ընտանիքը, առաջ բերենք հազարաւոր պատմութիւններից մէկը.

Պ... 65 տարեկան է։ 27 տ. հասակում նա սիֆիլիս էր ստացել։ Վեց տարուց յետոյ (առանց բժշկուելու) ամուսնացաւ և ահա նրա սերունդը։

Կինը 11 անգամ յղացել էր։

Առաջին յղութիւն։ Երեխան 19 ամսեկան մեռաւ ուղեղի քորքորումից։

2-դ յղ.—երեխան այժմ 18 տարեկան է, ընկնաւոր։

3-դ. յղ.—երեխան շատ դանդաղ է աճել, ընդունակութիւններ չունի, անտարբեր է դէպի ամեն ինչ։ Ամուսնացել է։

4-դ. յղ.—երեխան բախիտ ունի և հիստերիկ է (ներվային)։

5-դ. յղ.—եր. առողջ է մինչև հիմի։

6-դ. յղ.—եր. շատ բդամիտ է, 12 տ. հազիւ կարդալ-գրել է սովորել, կազմուածքը մանկային է մնացել, 19 տ. հասակում ինքնասպանութիւն է գործում.

7-դ. յղ.—եր. մեռնում է ուղեղի հիւանդութիւնից 22 ամսեկան։

8-դ. յղ.—եր. վատ էր զարգացած, 6 տ. բոլոր ատամները թափւում են։

9-դ. յղ.—եօթերորդ ամսում վիժում է մի մեռած երեխայ։

10-դ. յդ.—դարձեալ վիժումն երրորդ ամսում։

11-դ. յդ.—երեխան աղաւաղուած ա-տամներ ունի, գանկը սեղմուած, ականջ-ները դիք-դիք լցուած և չափազանց ցած, ներքևի ծնօտը դուրս պրծած։

Ահա... և մի ուրիշ դէպք։

Տ... սիֆիլիս է ստացել ամուսնութիւ-նից 5 տարի առաջ. կինը առողջ է մնացել (չի վարակուել) և 7 անգամ յղացել է։

Առ. յդ. վիժումն երեք ամսուայ։

2-րդ. յդ. վիժումն։

3-րդ. յդ. մեռած ու խմորած երեխայ։

4-րդ. յդ. երեխան մեռնում է 7 ամ-սական հասակում ներվային հիւանդութիւ-նից։

5-րդ. յդ. երեխան 9 տարեկան չը հա-սած, արդէն սեռական կիրք ունի (վավաշոտ է)։ Այժմ 22 տարեկան է և սաստիկ անբա-րոյական։ Սա մի կատարեալ հրէշ է թէ մարմնով թէ վարք ու բարքով։

6-րդ. յդ. երեխան ընկնաւոր է։

7-րդ. յդ. երեխան ուղեղի անկանոնու-թիւններ ունի, հինգ տարեկան հասակում միայն սկսել է խօսել. այժմ լինն տարեկան է

և դեռ ևս կարդալ չի սովորել։ Ապուշ է։

Նկ. 28.

Ա պ ո ւ շ։

Այսքանը բաւական է ցոյց տալու հա-մար սիֆիլիսի թոյնի անողոք քանդիչ ազ-դեցութիւնը սիֆիլիսոտի զաւակների վրա։

Բայց չը կարծէք, թէ այս զաւակներով վերջանում են նրա զոհերը։

Ո՛չ, սիֆիլիսի թոյնը դեռ չի սպառուել։ Նա աւելի հեռու է տարածում իր խեղդող ճանկերը... նա վատասերում է թոռներին ևս! Թոռները ևս լինում են հիւանդոտ, արա-

տաւոր, թուլակազմ, նրանք ևս անընդունակ-
ներ, ապուշներն ու ներվայիններ են դուրս
գալիս, նրանք ևս երկար չեն ապրում, հի-
ւանդանում են թոքախտով, բախիտ են ու-
նենում և այն և այն...

Մի օրինակ միայն։

Մի քիչ վերև առաջ բերած Պ...ի ըն-
տանիքի զաւակներից երրորդը, ինչպէս ասե-
ցինք, ամուսնացել է։ Եւ ինչ սերունդ է դուրս
գցել։ Երկու որդի միայն, և երկուսն էլ
մեռնում են,—մէկը տասն հանելիս, միւսը
7 ամսական հասակում ուղեղի ջրգողու-
թիւնից։...

Այս էլ թոռների վիճակը!...

Չէ՞ որ զարհուրելի է այս բոլորը և ո՞ր
բանական մարդը չի սարսափի այն ահագին
պատասխանատուութիւնից, որը նա յանձն է
առնում, երբ ցանկանում է ընտանիք կազ-
մել։ Սիֆիլիս ունեցողները թող լաւ խորհեն
այս դժուար քայլն անելուց առաջ, թող լաւ
հասկանան, որ իրանց անզգոյշ քայլով նրանք
թէ իրանց զաւակների ու թոռների կեանքը
ու երջանկութիւնն են վտանգի ենթարկում։

Իսկ իրանք։ Մի՞թէ իրանք կարող են
գէթ մի օր երջանիկ ու հանգիստ ապրել։

Չէ՞ որ իրանց համար ևս կեանքը մի դժողք
կդառնայ, երբ կտեսնեն, որ այս սոսկումների
ու աւերումների պատճառը իրանք են եղել,
միայն իրանք...

Սարսափելի կեանք, որից կարող էին
փրկուած լինել խելացի բժշկութիւնով և
բժշկի խորհրդով!...

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.R. Публичная Библиотека
7/XI-1922
Имени Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Երկրորդ տպագրութեան առիթով 3
Առաջաբան. 5
Ա. Ի՞նչ է վատ ցաւը կամ սիֆիլիսը . 7
Բ. Ի՞նչպէս են մարդիկ վատ ցաւ ստանում. 8
Գ. Ի՞նչպէս է սիֆիլիսը գիւղերը մըտնում. 15
Դ. Ի՞նչ են վատ ցաւի նշանները . . 16
Ե. Ուղեղի ու ողնուղեղի հիւանդութ. . 29
Զ. Ի՞նչպէս մարդ պէտք է պահպանի իրան վատ ցաւից. 33
Է. Բժշկութիւն. 38
Ը. Ե՞րբ սիֆիլիսոտը կարող է ամուսնանալ. 44

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ժառանգական սիֆիլիս 3
Ա. Զբերութիւն 6
Բ. Վիժու�. 7
Գ. Մեռած կամ շուտով մեռնող երեխաների ծնունդ 9
Դ. Արատաւոր ծնունդ. 14
ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՏԱՃՈՒՄՆ 19
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՏԱՃՈՒՄՆ 34

6709

«ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ»

Կիսամսեայ նկարազարդ հանդէս 4—6 նոյնպէս նկարազարդ գրքոյկներով.

Տարեկան բաժանորդագինն է 2 ռ. 50 կ.
Արտասահմանում. . . 10 ֆր. կամ 3½ ռ.

Հասցէն. Тифлисъ, редакція «Арогджапаикъ Тертъ».

Արտասահ. Tiflis. Redaction «Arogdjapahik Tert»

Դր. Վ. Արծրունու հրատարակութիւններ.

1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,
2) Խոլերայի մասին (սպառուած), 3) Խոլերա 5 կ.,
4) Հիպնոտիսմ, հատ. I. (սպառուած) 25 կ.
5) Հիպնոտիսմ, հատ. II. 15 կ., 6) Դպրոցական առողջապահութիւն (պատկերազարդ) 50 կ.
7) Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ.
8) Սիֆիլիս, Կակուղ շանկր, Սուսունակ 25 կ.
9) Թշուառների բարեկամ բժիշկ Հաազ 20 կ.
10) Ամուսնութիւն . . . . . 75 կ.
11) Աղջիկ (առողջ. և բարոյագիտակ. էտիւդ) 60 կ.

ԲԺՇԿԻ ԳՐՈՅՑՆԵՐԸ

№ 1. ՄԻ՛ ԽՄԻՐ, երկ. ա. (նկարագրով) 5 կ,
№ 2. ՎԱՏ ՅԱՀ (նկ.). . . . . 6 կ.
№ 3. ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԹՈՅՆԸ 23 նկ. 15 կ.
№ 4. ԹՈՒԱԽՏ ԿԱՄ ԲԱՐԱԿԱՅԱՒ (նկ.) 10 կ.
№ 5. ԴՈՂԷՐՈՅԹ ԿԱՄ ՄԱԼԱՐԻԱ (նկ.) 5 կ.
№ 6. ԻՆՖԼՈՒԷՆՅԱ ԿԱՄ ՆՈՐ ՅԱՀ (նկ.) 3 կ.
№ 7. ՄԻ՛ ԾԽԻՐ. . . . . 5 կ.
№ 8. ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ (նկ.) . . 5 կ.
№ 9. ՎԱՏ ՅԱՒ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ, երկրորդ հրատարակութիւն Ա. մասն (9 նկ.) 20 կ.
№ 10 ՎԱՏ ՅԱՒ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ Բ մասն 15 կ.

Հեղինակի հասցէն. Тифлисъ, Д-ру В. М. Арцруни.